*
* *

Սիրելի Ս. Մն—ին.

Մէկը չեղաւ, որ իմանար դարդերս,
Քնքուշ ձեռքով դարման անէր վէրքերիս.
Մէկը չեղաւ, որ դուրդուրէր վարդերս,
Անուշ բոյր տար, վարդի գոյն տար երգերիս։

Կեանքս կը տամ սրտից բղխած համբոյրին.
Ա՜խ, թէ մէկը ինձ հասկանար ու սիրէր.
Ի՞նչ կայ երկրում և սրբազան ու անգին,
Քան թէ զոհուել, քան թէ լինել անձնուէր։

Բայց ես կեանքում մրբ մնացի ու անտէր,
Մէկը չեղաւ, որ իմանար դարդերս.
Սիրող հոգիս ծարաւ մնաց ու անսէր,
Մէկը չեղաւ, որ դուրդուրէր վարդերս։

Հաբոյրներիս վառ դարունը թօշնեցաւ,
Խոր վէրքերս բացուած՝ անբոյժ մնացին,
Դալար սրտիս սուրբ արցունքը քարացաւ
Ու ծանրացաւ սրտիս վերայ դառնագին։

Մեռիր, գնա... առանց քեզ էլ կեանքը կայ,
Ուրիշ վարդեր կը շողշողան դարունքին.
Ուրիշ շրթունք դուցէ վնդը կամ հիմայ
Կը համբուրէ քու սիրածին կաթոգին։

Մէկը չեղաւ, որ իմանար դարդերս,
Քնքուշ ձեռքով դարման անէր վէրքերիս.
Մէկը չեղաւ, որ դուրդուրէր վարդերս,
Անուշ բոյր տար, վարդի գոյն տար երգերիս։

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ